

տական նպատակներով, թէեւ չմերժեցին ընդունիլ ընկերվարութիւնը իրրեւ առաջաւոր մարդկութեան հետաւոր մէկ խոհալը, դէպի որը տանող ճամբան սակայն անոնք կը նկատէին մեր ազգի քաղաքական ազատութիւնը:

Այսպիսով, Հ. Յ. Դաշնակցութեան հիմնադիրներու համար սոցիալիզմը եղաւ դերագանցապէս բարոյական մէկ պահանջ, տեսական մէկ սկզբունք, բայց ոչ քաղաքական հրատապ գործ:

1905 թ. ոռւս յեղափոխական մեծ շարժումը սակայն, որ տեղի կ'ունենար ընկերվարական գաղափարներու եւ նշանաբաններու տիրական ազդեցութեան տակ, անյաղթելի թափով մը համակեց նաեւ հայ երիտասարդութիւնը սոցիալիստական մտայնութեամբ ու մղումներով: Մասնաւորապէս հայկական խոչոր գաղութային կեդրոններու մէջ, ինչպէս, օրինակ, Բագու, Թիֆլիս, Ռոստով, Մոսկուա, Պետրոգրատ, ուր առանձնապէս ուժգին էր ոռւս յեղափոխութեան յորձանքը եւ ուր հայ մտաւորականը, բանուորն ու նոյնիսկ քաղքենին կատարելապէս անկարող էին պահպանել քաղաքական ուրոյն, անկախ դիրքեր եւ չենթարկուիլ ոռւսական սոցիալիզմի դադարարական հմայքին, հայ երիտասարդութիւնը աննկատելի կերպով ոռւսական մտքի դերին դարձաւ եւ դրեթէ առանց քննադատութեան իւրացուց անոր վարակիչ թելադրութիւնները:

Սոցիալիզմը մօզա էր:

Ամօթ էր սոցիալիստ չլինել:

Ամէն մէկ պատուաւոր մարդ, որ պուրժուա կամ յետադէմ մակդիրը չէր ուզեր իր վրայ վերցնել, պէտք է ինքզինքը սոցիալիստ հռչակէր:

Եւ ո՞ր մտաւորականը եւ մանաւանդ երիտասարդը կրնար յանդգնութիւն ունենալ չհազնել սոցիալիստի զգեստը:

Ամէն մարդ կը շտապէր իր վրայէն նետել ամէն գաղափար, որ կրնար վարկաբեկել կամ կասկածելի դարձնել զինքը իրրեւ ոչ բաւականաչափ ուղղափառ հետեւորդ սոցիալիզմի:

Այլեւս իրօք վէճ ալ չի կար սոցիալիստ ըլլալու կամ չըլլալու մասին. որովհետեւ ամէնքն ալ սոցիալիստ կը ձեւանային: Խնդիրը աստիճաններուն եւ տեսակներուն մասին էր:

Խնդիրը «ուղղափառ», «իսկական», «մաքուր» սոցիալիստ լինելու մասին էր: Իսկ ուղղափառ սոցիալիստ լինելու համար կը պահանջուէր ունենալ չափուած-ձեւուած աշխարհայեցողութիւն մը, որ պաշտօնապէս նուիրագործուած էր տիրող ոռւս սոցիալիստական կուսակցութեանց ու անոնց տեսարաններուն կողմէն: Որ եւ է շեղում հաւատոյ այն հանգանակներէն, զորս առաջադրած էին ոռւս սոցիալիստական առաջնորդները, բաւական էր կասկածի ենթարկելու համար անհատի մը կամ խմբակցութեան մը սոցիալիստական մաքրութիւնը, կուսութիւնը:

Կարճ. սոցիալիզմը Ռուսիոյ մէջ դարձեր էր կրօն, իսկ սոցիալիստական կազմակերպութիւնները՝ մէկ մէկ եկեղեցիներ: Ամէն մարդ կ'ուզէր հաւատացեալ լինել, եւ ամէն մարդ պարտաւոր էր որ եւ է եկեղեցիի պատկանիլ: Իսկ անոնք, որ չէին ուզեր այդ ընել, հերետիկոսներ էին եւ անխնայ հալածանքի արժանի:

Հայ մտաւորականութիւնը Ռուսիոյ մէջ, մասնաւորապէս երիտասարդ մտաւորականութիւնը հարկաւ չէր ուզեր ինքզինքը մեկուսացման ենթարկել եւ հարկադրուած կը զգար յարիլ դոյութիւն ունեցող ոռւս սոցիալիստական եկեղեցիներէն մէկուն կամ միւսին:

Դաշնակցական մտաւորականներու ընտրութիւնը ինկաւ ոռւս սոցիալիստ-յեղափոխական կուսակցութեան վրայ: Եւ ասիկա անշուշտ պատահական բան մը չէր եւ ունէր իր որոշ հիմքերը:

Նախ որ Հ. Յ. Դաշնակցութեան հիմնադիրները ոռւս այսպէս կոչուած «նարոզնիկներու» (ժողովրդապէրներու) դպրոցէն դուրս եկած մարդիկ էին. ոմանք, ինչպէս, օրինակ, Քրիստափոր Միքայէլեանը, Զաւարեանը եւ այլն, յարած էին նարոզնիկներու կազմակերպութեան: Դաշնակցական ամենէն ախտիւ ու ղեկավար գործիչներէն շատերը տողորուած էին նարոզնիկական գաղափարներով եւ իրենց ամբողջ համակրութիւնը այդ գաղափարները որդեգրած ոռւս կուսակցութեան կողմնէր:

Ատկէ զատ, ոռւս նարոզնիկները կամ սոցիալիստ - յեղափոխականները գիւղացիութեանը յեղափոխական դեր մը կուտային, —